



ԱՆՈՒՉ ԹԱՍԱՎՅԱՆ

Ստեղծագործողի ավստասանքը

Երբևէ եղե՞լ է, որ լաց լինելու աստիճան հուզվեք մի բանի համար, որ . . . Հիմա կգարմանաք՝ իհարկե՛, բազմիցս . . . Բայց, հարցս մինչև վերջ ձևակերպեմ, հետո մտածեք՝ այդ կամ ոչ: Ինձ հետ գոնե երբեք չէր պատահել: Ու եթե ինձ հարցնեին, առանց վարանելու, հարցի կեսն անգամ չլսած, միանգամից կասեի՝ իհարկե ո՛չ: Ես շատ վաղուց եմ գրում: Մի անգամ նույնիսկ անդրադարձել եմ իմ գրելու գրեթե ողջ պատմությանը: Սկզբում «գրում էի» բանավոր: Ինչո՞ւ: Դե ես այն ժամանակ տառաճանաչ չէի, դպրոց չէի հաճախում: Շա՛տ փոքր էի, այդ պատճառով էլ տառերը չէի ճանաչում ու գրում էի հենց այդպես՝ բանավոր, բերանացի: Այդ ժամանակ գոնե համոզված էի, որ «լուրջ գործ եմ անում»: Այդ տարիները՝ թիթեռների պես գունավոր ու անհոգ, շատ արագ անցան: Դե ես հետո էլ էի գրում, բայց արդեն հենց այնպես, գրելու համար: Ու պատահեց այն, ինչ որ պատահեց: Մի պատմվածք ունեմ, որն էլ հիմք դարձավ այս մտորումների համար: «Լավն է», - ասում էին բոլոր նրանք, ովքեր ուզում էին իմ գրածներին ծանոթանալ: Հերթով կարդացին մարդիկ՝ աշխատանքային ընկերներ, ընկերներ . . . Ես գիտեի, որ լավն է, այդ պատմությունը ծայրեծայր հորինված է, թեպետ ոմանք մտածում էին, թե՛ իրական: Ամեն դեպքում, դա շատ վաղուց էր: Գրեթե տասը-տասներկու տարի առաջ: Կարդացին, հավանեցին, ուրախացա ու . . . ու մնաց համակարգչիս մեջ: Տարիներ անցան: Հանկարծ հիշեցի, որ սխալ եմ եղել: Արժե տպագրել: Ու ի՞նչ: Ի՞նչ եք կարծում, գրականությունը, Չարենցի ասած, ժամանակի շունչը պիտի լինի: Իսկ իմ այս պատմվածքը լավ կլինե՞ր հենց այդ տարիներին կարդալ, երբ որ ստեղծվել էր:

Հիմա հարցս ավարտին հասցնեմ, ամփոփեմ:

Երբևէ եղե՞լ է, որ ժամանակին չտպագրված ու հիմա արդեն մերժված պատմվածքի համար արտասվելու չափ տխրեք: Ես էլ պատասխանեմ առաջինը՝ ինձ հետ եղել է, որովհետև երբևէ ուշադիր չեմ եղել իմ ստեղծածների հետագա ճակատագրի հանդեպ: Ստեղծագործությունը երեխայի նման է, պիտ հետևել, մտահոգվել նրա ճակատագրով: Ու հիմա աստուծոյն եմ, որովհետև ամեն ինչ ժամանակի մեջ է բովանդակային: Իհարկե, արդարացումն էլ ունեմ՝ ա՛խր, այնքան հեշտ է տրվում: Երբևէ դժվարություն չեմ ունեցել բառ գտնելու համար: Սա էլ արդարացումս: Իսկ ավելի ճիշտ՝ ստեղծագործողի աստուծանք: